

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՓՅՈՒՆՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



MINISTRY OF DIASPORA OF
THE REPUBLIC OF ARMENIA

ՆԱԽԱՐԱՐ

MINISTER

«22» Դեկտեմբերի 2009 թ.
01/ 900-09

**ՄԻՆՍԿԻ «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ -ԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ԷՐԵՔՈՒՆԻ» ԵՐԳԻ-ՊԱՐԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՄՈՒՅԹԻ ՂԵԿԱՎԱՐ
ՌՈՒԶԱՆՆԱ ԳԵՈՐԳԻԻ ԱՎԱՆԵՍՅԱՆԻՆ**

Սիրով և ջերմությամբ շնորհավորում եմ Ձեզ և Ձեր ղեկավարած կազմակերպության բոլոր անդամներին Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ և մաղթում, որ 2010 թվականը համայն հայության համար լինի խաղաղության, բարօրության, կայունության, նոր ձեռքբերումների և նպատակների իրականացման տարի:

Սիրով շնորհակալություն հայտնելով 2009 թվականի ընթացքում անկեղծ համագործակցության համար, ցանկանում եմ, որ 2010 թվականին էլ ավելի խորացնենք և համադրենք մեր բոլոր ջանքերը՝ Սփյուռքում հայապահպանության, Սփյուռքի ներուժի համախմբման, ինչպես նաև Հայաստան-Սփյուռք գործակցության ամրապնդման և արդյունավետ զարգացման համար:

Այս տոնական օրերի ուրախ առիթով մաղթում եմ Ձեզ ուժ և կորով՝ Սփյուռքում Ձեր բեղուն գործունեությունը շարունակելու համար: Աշխատենք և պայքարենք հանուն անկախ հայրենիքի հզորացման, դառնանք հավաքական ուժ Հայրենիք-Սփյուռք գործակցությունն առավել արդյունավետ զարգացնելու համար:

Ծնորհավոր Նոր Տարի և Ս. Ծնունդ:

Հարգանքով՝

ՀՐԱՆՈՒՑ ՀԱԿՈՒԹՅԱՆ

